**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7**

**03.02.2023թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/21 գնման պայմանագրի**

ք. Երևան «26» «05» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԻԼԴԸՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ և «ԲԻԴԵՔ» ՍՊ ընկերությունները /Կոնսորցիում/, ի դեմս «ԲԻԼԴԸՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ տնօրեն Ա. Գուրգենյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ինչպես նաև կոնսորցիումի 18.01.2023 թվականին կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.02.2023թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/21 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.10 կետերը ինչպես նաև **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

***1.Համաձայնագրի առարկան***

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով սահմանված **Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի N16 հասցեի վարչական շենքի՝ որպես կառավարման կենտրոնի վերակառուցման աշխատանքների** գինը նվազեցնել *28 895 181.13 (քսանութ միլիոն ութ հարյուր իննսունինիգ հազար մեկ հարյուր ութսունմեկ դրամ փասներեք լումա) ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ-ն:*

1.2 Պայմանագրի 5.1 կետով սահմանված՝ 418 523 156.31 (չորս հարյուր տասնութ միլիոն հինգ հարյուր քսաներեք հազար մեկ հարյուր հիսունվեց դրամ երեսունմեկ լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն գումարը **սահմանել 389 627 975.18 (երեք հարյուր ութսունինը միլիոն վեց հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր յոթանասունհինգ դրամ տասնութ լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 2/երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԲԻԼԴԸՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Հասցե՝ ք. Երևան, Արցախի |
| ՀՀ ֆինանսների նախարարության | պող., շ.18ա, բն.37 |
| գործառնական վարչություն | «ԱմերիաԲանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900012001351 | Հ/Հ 1570075202550100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00499522 |
| Վ.Պապիկյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ | Ա. Գուրգենյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ |